ԿՈՌՈՒՊՑԻԱՅԻ ԿԱՆԽԱՐԳԵԼՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

ՎԻՎ/91/2025

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ՎԱՐՉԱԿԱՆ ՏՈՒՅԺ ԿԻՐԱՌԵԼՈՒ ՄԱՍԻՆ

ք. Երևան 13 մարտի 2025թ.

Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովը (այսուհետ՝ Հանձնաժողով), մասնակցությամբ Հանձնաժողովի անդամներ Մարիամ Գալստյանի (նիստը նախագահող), Արամայիս Փաշինյանի, Արմեն Մարուխյանի և Լիլիթ Ալեքսանյանի, 2025 թվականի մարտի 13-ին քննելով ՀՀ Արմավիրի մարզի Արաքս համայնքի ղեկավար Ղազար Նշանի Ղազարյանի նկատմամբ Վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգրքի (այսուհետ՝ Օրենսգիրք) 169.28-րդ հոդվածի 5-րդ մասով նախատեսված առերևույթ իրավախախտման հատկանիշներով հարուցված թիվ ՎԻՎ/91/2025 վարչական գործը

ՊԱՐԶԵՑ

1. **Վարչական իրավախախտման վերաբերյալ գործի վարույթի նախապատմությունը.**

1.1 Հանձնաժողովը, ղեկավարվելով «Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մասին» օրենքի 25-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով, իրականացրել է հայտարարատու պաշտոնատար անձ հանդիսացող Ղազար Նշանի Ղազարյանի կողմից Հանձնաժողով ներկայացված 2023 թվականի գույքի,

եկամուտների, ծախսերի և շահերի հայտարարագրում (այսուհետ՝ Հայտարարագիր) հայտարարագրված տվյալների արժանահավատության և ամբողջականության ստուգում, որի արդյունքում պարզվել է հետևյալը՝

Հայտարարագրի «Ե.1. Մասնակցությունն առևտրային կազմակերպություններում» բաժնում Ղազար Ղազարյանը չի հայտարարագրել իր կնոջ՝ Մելանյա Մկրտչյանի «Ղ-Ֆարմ» ՍՊ ընկերությունում բաժնեմաս ունենալու վերաբերյալ տվյալը:

1.2 Հանձնաժողովը ձեռք բերված և ուսումնասիրված վերը նշված տվյալի հիման վրա արձանագրել է, որ առերույթ առկա են Օրենսգրքի 169.28-րդ հոդվածի 5-րդ մասով նախատեսված զանցանքի հատկանիշներ և 2025 թվականի փետրվարի 7-ին Ղազար Ղազարյանին հասցեագրել է թիվ 01/507-2025 գրությունը՝ խնդրելով գրությունը ստանալուց հետո՝ 3-րդ աշխատանքային օրը, ժամը՝ 11:00-ին անձամբ կամ ներկայացուցչի միջոցով ներկայանալ Հանձնաժողով վարչական իրավախախտման վերաբերյալ արձանագրություն կազմելու համար, իսկ 5-րդ աշխատանքային օրը, ժամը 15:00-ին՝ գործի քննությանը մասնակցելու նպատակով: Նշված գրությունը Ղազար Ղազարյանը ստացել է 2025 թվականի մարտի 6-ին՝ դրա մասին հավաստում ուղարկելով Հանձնաժողովի պաշտոնական էլեկտրոնային փոստին:

1.3 2025 թվականի մարտի 11-ին պատշաճ ծանուցված Ղազար Ղազարյանի բացակայությամբ, կազմվել է վարչական իրավախախտման վերաբերյալ թիվ ՎԻՎ/35/25 արձանագրությունը՝ Օրենսգրքի 169.28-րդ հոդվածի 5-րդ մասով նախատեսված առերևույթ իրավախախտման հատկանիշներով:

1.4 Վարչական իրավախախտման վերաբերյալ գործի քննության տեղի և ժամանակի մասին պատշաճ ծանուցված Ղազար Ղազարյանի բացակայությամբ 2025 թվականի մարտի 13-ին՝ ժամը՝ 15:00-ին, տեղի է ունեցել վարչական իրավախախտման վերաբերյալ գործի քննություն:

II. Վարույթի մասնակցի ներկայացրած դիրքորոշումը ու պարզաբանումները

Ղազար Ղազարյանի կողմից 2025 թվականի մարտի 6-ին Հանձնաժողովին ներկայացվել է հետևյալ գրավոր պարզաբանումը.

«(...) 2025 թվականի մարտի 06-ին էլեկտրոնային ծանուցմամբ 07.02.2025թ. թիվ 01/507/2025 ելից թվագրմամբ ստացել եմ գրություն այն մասին, որ Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովը (այսուհետ՝ Հանձնաժողով) իմ ընտանիքի անդամի (կնոջս)՝ Մելանյա Մկրտչյանի կողմից Հանձնաժողով ներկայացված հայտարարագրերի՝ այդ թվում 2023 թվականի պաշտոնատար անձի ընտանիքի անդամի գույքի, եկամուտների և ծախսերի տարեկան հայտարարագրի ուսումնասիրությամբ պարզել է, որ նշված հայտարարագրում (հայտարարագրերում) **«Բ.3 Արժեթղթեր և այլ ներդրումներ»** բաժնում «Ղ Ֆարմ» ՍՊ ընկերության բաժնեմասնակցության վերաբերյալ հայտարարագրված տվյալներ առկա չեն:

Վերոգրյալի պայմաններում որպես բացատրություն և պարզաբանում **(այդ թվում՝ որպես առարկություն զանցանք որակելու հանգամանքի կապակցությամբ)** իմ կինը՝ Մելանյա Մկրտչյանը արդեն իսկ Հանձնաժողով է ներկայացրել համապատասխան գրավոր պարզաբանում, որտեղ հայտնել է իրականությունը: Մասնավորապես, որպես պարզաբանում իմ կինը՝ Մելանյա Մկրտչյանը, գրավոր հայտնել է, որ հանդիսանալով հայտարարատու, իր կողմից «Բ3 Արժեթղթեր և այլ ներդրումներ» բաժնում «Ղ ֆարմ» ՍՊ ընկերության բաժնեմասնակցության վերաբերյալ տվյալներ չներկայացնելը ոչ միայն որևէ դիտավորության արդյունք չի եղել, քանի որ անհերքելի փաստ է, ու Մելանյա Մկրտչյանը հանդիսանում է նշված ՍՊ ընկերության համահիմնադիր, և այդ փաստը թաքցնելը անտրամաբանական է: Անտրամաբանական և՛ տեսական, և՛ գործնական առումով, քանի որ առնվազն ՀՀ

ՊԵԿ-ում այդ տվյալներն առկա են, ու Մելանյա Մկրտչյանը ոչ մի կերպ չէր կարող դա թաքցնել: Բացի այդ, նշված հանգամանքը թաքցնելու միտումը ևս չի եղել:

Բացի այդ, գտնում եմ, որ կնոջս կողմից 2023 թվականի հայտարարագրի (ինչպես նաև նախորդ տարիների հայտարարագրերում) «Բ.3 Արժեթղթեր և այլ ներդրումներ» բաժնում «Ղ ֆարմ» ՍՊ ընկերության բաժնեմասնակցության վերաբերյալ տվյալներ չներկայացնելն իրականում նրա կողմից ոչ թե անզգուշությամբ սխալ կամ ոչ ամբողջական տվյալներ ներկայացնելու հատկանիշներ է պարունակում, այլ հայտարարագիրը լրացնելիս նշված բաժինը կնոջս կողմից չի ընկալվել որպես ՍՊԸ-ում հիմնադիր կամ մասնակից լինելու հանգամանք պարունակող տվյալների ներկայացման հարթակ (բաժին): Ըստ կնոջս անկեղծ բացատրության և պարզաբանման՝ հիշյալ բաժնում նրան թվացել է և նա մտածել է, թե պետք է ներկայացվեն օրինակ որևէ ընկերությունում կամ կոոպերատիվում արժեթուղթ՝ մուրհակ կամ գույքային իրավունքները հավաստող փաստաթուղթ ունենալու հանգամանքը, ինչը նա չունի, և ըստ կնոջս տրված տեղեկատվության՝ «Ղ ֆարմ» ՍՊ ընկերությունում նա 2023 թվականին կամ դրանից առաջ ներդրում որպես այդպիսին չի կատարել: Հետևաբար կինս՝ Մելանյա Մկրտչյանը, կարծել և մտածել է, որ չկա հայտարարագրում որևէ մի բաժին, որտեղ պետք է իր բաժնեմասնակցության վերաբերյալ նա նշի: Ուստի քննարկվող հանգամանքի մասին չներկայացնելը նրա կողմից ընդամենը կրել է տվյալ բաժինն ամբողջապես չընկալելու արդյունք, այդ հասկացությունն ամբողջապես չհասկանալու հետևանք: Ու քանի որ կինս ինքն է լրացրել իր հայտարարագիրը, ուստի օբյեկտիվորեն ես ևս դրա վրա ուշադրություն չէի կարող դարձնել:

Ուսումնասիրելով իրավիճակը և հասկանալով արդեն հանգամանքները՝ ինչպես կինս, այնպես էլ ես գտնում ենք, որ սույն դեպքում չի կարող խոսք գնալ պատասխանատվության մասին, քանզի մեր կարծիքով կինս ոչ թե սույն դեպքում

զանցանք է կատարել, այդ թվում՝ ոչ թե անզգուշությամբ սխալ կամ ոչ ամբողջական տվյալ եմ ներկայացրել, այլ չհասկանալով և չընկալելով մատնանշված բաժնի ամբողջական պահանջը՝ ուղղակի ՍՊԸ-ում իմ մասնակցության վերաբերյալ չի նշել:

Քանի որ ՎԻՎՕ-ի իմաստով մեկ տարին լրացած լինելու հիմքով քննարկման ենթակա չեն այլևս 2020-2022թթ. հայտարարագրերը, և ՎԻՎՕ-ի պատասխանատվության իմաստով քննարկման առարկա է բացառապես 2023 թվականի ներկայացված հայտարարագիրը, ուստի ինչպես կինս, այնպես էլ ես հիմա գտնում ենք, որ մինչև 2023 թվականը տարիներ շարունակ կինս նույն կերպ է հայտարարագիր ներկայացրել, ու նրա մտքով չի անցել, որ լրացման մեջ «սխալմունք» կա, քանի որ այսքան տարիների ընթացքում նրան որևէ մեկն այդ «սխալի» մասին չի հայտնել:

2024 թվականի համար դեռևս նրա կողմից չլրացված հայտարարագրում համոզված են նա այդ խնդիրը շտկած կլինի, և արդյունքում կներառի քննարկվող տվյալները 2024 թվականի համար լրացվելիք հայտարարագրում: Ուստի և՛ կինս, և՛ ես գտնում ենք, որ հետևանքի առումով նաև այս ամենը չի կարող առաջացնել և չի առաջացրել բացասական հետևանք, իսկ թերությունը 2024 թվականի հայտարարագրում վերացնելով՝ փաստացի նախորդ տարիներին քննարկվող բաժնեմասնակցության վերաբերյալ չնշելն կդառնա փաստացի նվազ կարևոր կամ ոչ կարևոր:

(...) հայտնելով վերոգրյալի մասին՝ խնդրում և միջնորդում եմ վարույթը կարճել և կնոջս նկատմամբ չկիրառել որևէ պատասխանատվության միջոց:

Վերոնշյալ պարզաբանումներից հետո, եթե Հանձնաժողովն, այնուամենայնիվ, գտնի, որ առկա է Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքով նախատեսված որևէ առերևույթ զանցանքի հատկանիշներ, ապա խնդրում եմ քննարկման առարկա դարձնել բացառապես նույն օրենսգրքի 169.28-րդ հոդվածի 3-

րդ մասով նախատեսված հատկանիշները, քանի որ ինչպես կինս է գրավոր հավաստել, ես նույնպես պնդում եմ, որ քննարկվող հանգամանքում բաժնեմասնակցության վերաբերյալ տվյալները չներառելը չի եղել կնոջս ո՛չ դիտավորության և ո՛չ էլ՝ անզգուշությամբ սխալ կամ ոչ ամբողջական տվյալ ներկայացնելու արդյունք:

Միաժամանակ, նկատի ունենալով, որ որպես Արմավիրի մարզի Արաքս համայնքի ղեկավար ունեմ խիստ ծանրաբեռնված աշխատանքային գրաֆիկ, ուստի խնդրում եմ հնարավորության դեպքում Հանձնաժողով իմ ֆիզիկական չներկայանալը համարել հարգելի և հիմք ընդունել իմ սույն գրավոր պարզաբանումը ու կնոջս գրավոր պարզաբանումը:»:

III Վարույթի համար էական նշանակություն ունեցող փաստեր

Հանձնաժողովը, ուսումնասիրելով թիվ ՎԻՎ/91/2025 գործում առկա նյութերը, կատարել է հանգամանքների քննություն և հաստատված է համարում, որ՝

3.1 ՀՀ Արմավիրի մարզի Արաքս համայնքի ավագանու 2021 թվականի դեկտեմբերի 17-ի թիվ 2 որոշման համաձայն Ղազար Ղազարյանը ընտրվել է ՀՀ Արմավիրի մարզի Արաքս համայնքի ղեկավարի պաշտոնում (https://araqshamaynq.am/Pages/DocFlow/Default.aspx?a=v&g=4fd2feaa-fe36-412b-9a27-9ab1f4169dbc) և նույն համայնքի պաշտոնական կաքէջում առկա տեղեկությունների համաձայն մինչ օրս զբաղեցնում է այդ պաշտոնը (https://araqshamaynq.am/Pages/DocFlow/Default.aspx?dt=mer):

3.2 «Հանրային ծառայության մասին» օրենքի (այսուհետ՝ Օրենք) 34-րդ հոդվածով սահմանված կարգավորումների համաձայն՝ Ղազար Ղազարյանը հանդիսանում է գույքի, եկամուտների, շահերի և ծախսերի հայտարարագրման պարտականություն ունեցող անձ:

3.3 Հայտարարագրի համաձայն՝ Մելանյա Մկրտչյանը հանդիսանում է Ղազար Ղազարյանի կինը:

3.4 ՀՀ արդարադատության նախարարության իրավաբանական անձանց պետական ռեգիստրի գործակալության տվյալների համաձայն՝ Մելանյա Մկրտչյանը 2017 թվականի դեկտեմբերի 8-ից հանդիսանում է «Ղ Ֆարմ» ՍՊ ընկերության (Պետական եկամուտների կոմիտեի տվյալների համաձայն գործող ընկերություն է, իսկ լուծարման գործընթացում գտնվելու կամ գործունեության (գոյության) դադարման մասին պետական միասնական գրանցամատյանում տեղեկություններ գրառված չեն) 50% բաժնետեր:

3.5 Ղազար Ղազարյանի կնոջ՝ Մելանյա Մկրտչյանի «Ղ Ֆարմ» ՍՊ ընկերության 50% բաժնեմասը չի հայտարարագրվել Հայտարարագրի «Ե.1. Մասնակցությունն առևտրային կազմակերպություններում» բաժնում:

IV. Որոշումն ընդունելու իրավական հիմքերը և հիմնավորումները.

4.1 «Հանրային ծառայության մասին» օրենքի (այսուհետ՝ Օրենք) 34-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն սույն օրենքի իմաստով՝ հայտարարատու պաշտոնատար անձինք են (...) համայնքների ղեկավարների (...) պաշտոն զբաղեցնող անձինք:

4.2 Օրենքի 42-րդ հոդվածի (Շահերի հայտարարագրի բովանդակությունը) 1-ին մասի համաձայն հայտարարագրի՝ «Մասնակցությունը առևտրային կազմակերպություններում» բաժնում նշվում են կազմակերպության անվանումը, որի հիմնադիր են կամ որի կանոնադրական կապիտալում մասնակցություն ունեն կամ որի իրական շահառու են հայտարարատու պաշտոնատար անձը և (կամ) նրա ընտանիքի անդամները, կազմակերպությունում ունեցած ուղղակի կամ անուղղակի մասնակցության (փայեր, բաժնետոմսեր, բաժնեմասեր) չափը, մասնակցությունը

ձեռք բերելու կամ իրական շահառու դառնալու օրը, ամիսը, տարին, կամ որի կառավարման մարմիններում ընդգրկված անձանց իրավասու են նշանակելու կամ ազատելու հայտարարատու պաշտոնատար անձը և (կամ) նրա ընտանիքի անդամները, հարկ վճարողի հաշվառման համարը, հասցեն:

4.3 Օրենսգրքի 169.28-րդ հոդվածի 5-րդ մասի համաձայն՝ հայտարարատուի կողմից հայտարարագրում անզգուշությամբ սխալ կամ ոչ ամբողջական տվյալ ներկայացնելը առաջացնում է տուգանքի նշանակում՝ սահմանված նվազագույն աշխատավարձի երկուհարյուրապատիկից չորսհարյուրապատիկի չափով:

4.4 «Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մասին» օրենքի 26-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքով նախատեսված վարչական իրավախախտումների վերաբերյալ վարույթի հետ կապված հարաբերությունները կարգավորվում են Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքով, ինչպես նաև «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով՝ հաշվի առնելով սույն օրենքով սահմանված առանձնահատկությունները:

4.5 «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ վարչական մարմինը պարտավոր է ապահովել փաստական հանգամանքների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ քննարկումը՝ բացահայտելով գործի բոլոր, այդ թվում՝ վարույթի մասնակիցների օգտին առկա հանգամանքները:

4.6 Օրենսգրքի 252-րդ հոդվածի համաձայն՝ մարմինն ապացույցները գնահատում է իր ներքին համոզմունքով, որը հիմնված է գործի՝ իրենց ամբողջությամբ վերցված բոլոր հանգամանքների համակողմանի, լրիվ և օբյեկտիվ հետազոտման վրա, ղեկավարվելով օրենքով և իրավագիտակցությամբ:

4.7 Օրենսգրքի 244.17-րդ հոդվածի համաձայն՝ Օրենսգրքի 169.28-րդ հոդվածով նախատեսված վարչական իրավախախտումների վերաբերյալ գործերը քննում և վարչական տույժեր է նշանակում Հանձնաժողովը:

4.9 Օրենսգրքի 282-րդ հոդվածի համաձայն՝ քննելով վարչական իրավախախտման վերաբերյալ գործը, մարմինը (պաշտոնատար անձը) ընդունում է հետևյալ որոշումներից մեկը՝ 1) վարչական տույժ նշանակելու մասին, 2) գործի վարույթը կարճելու մասին:

4.10 «Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մասին» օրենքի 26-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ Հանձնաժողովը Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքով նախատեսված վարչական իրավախախտումների վերաբերյալ վարույթի արդյունքում ընդունում է որոշումներ, որոնք կարող են բողոքարկվել «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքին համապատասխան՝ դատական կարգով:

Սույն գործով հաստատված փաստական հանգամանքների նկատմամբ կիրառելի իրավական նորմերի վերլուծության արդյունքում Հանձնաժողովն արձանագրում է.

Օրենքով սահմանված հայտարարագրման ենթակա տվյալներին վերաբերող իրավակարգավորումներով սահմանված պահանջներն ամբողջական կերպով ներկայացված են հայտարարագրերի լրացման էլեկտրոնային համակարգում, որտեղ հայտարարատուի կողմից լրացվում են Օրենքով պահանջվող վերաբերելի տվյալները:

Առաջնորդվելով նշված որոշմամբ սահմանված հայտարարագրի լրացմանը ներկայացվող պահանջներով՝ Հանձնաժողովը հայտարարագրերի լրացման կարգի խախտում է որակում այն դեպքերը, երբ հայտարարագրման ենթակա տվյալը լրացվել է սխալ ենթաբաժնում: Այն դեպքում, երբ հայտարարատուի ներկայացրած տվյալին

վերաբերող որևէ տվյալ չի լրացվում համապատասխան դաշտում և լրացվում է այլ ենթաբաժնում՝ հայտարարատուն թույլ է տալիս հայտարարագրի լրացման կարգի պահանջների խախտման արարք, մինչդեռ, Օրենքով պահանջվող **հայտարարագրման ենթակա առանձին տվյալները չներկայացնելու կամ սխալ ներկայացնելու դեպքում՝ թույլ է տալիս ոչ ամբողջական կամ սխալ տվյալների ներկայացման արարք:**

Սույն գործով ՀՀ Արմավիրի մարզի Արաքս համայնքի ղեկավար՝ Ղազար Ղազարյանը Օրենքի 34-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ որպես հայտարարագիր ներկայացնելու պարտականություն կրող անձ Հայտարարագրում անզգուշությամբ ներկայացրել է ոչ ամբողջական տվյալ, այն է.

Հայտարարագրի «Ե.1. Մասնակցությունն առևտրային կազմակերպություններում» բաժնում չի հայտարարագրել իր կնոջ՝ Մելանյա Մկրտչյանի «Ղ Ֆարմ» ՍՊ ընկերության բաժնեմասի վերաբերյալ տվյալը, որը պարտավոր էր հայտարարագրել՝ Օրենքի 42-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն:

Միաժամանակ, Հանձնաժողովն արձանագրում է, որ Ղազար Ղազարյանի կնոջ «Ղ Ֆարմ» ՍՊ ընկերությունում բաժնեմաս ունենալու վերաբերյալ չհայտարարագրված տվյալը որևէ այլ կերպ բացահայտված չէ Հայտարարագրում:

Հաշվի առնելով արձանագրված խախտման նկատմամբ կիրառելի իրավական նորմերի պահանջները, սույն գործով առկա փաստերից հետևում է, որ Ղազար Ղազարյանը Հայտարարագրում անզգուշությամբ ներկայացրել է սխալ և ոչ ամբողջական տվյալ, որի արդյունքում թույլ է տրվել Օրենսգրքի 169.28-րդ հոդվածի 5-րդ մասով սահմանված արարք:

Խախտման հիմքով պատասխանատվություն սահմանելու հարցը որոշելու համար Հանձնաժողովը գտնում է, որ անհրաժեշտ է յուրաքանչյուր գործով գնահատել, արդյո՞ք տվյալ խախտումը հանգեցրել է նորմով պաշտպանվող

իրավահարաբերությունների խաթարմանը: Այս առնչությամբ էական է խախտման (արարքի) որակական կողմը:

Արարքի որակական կողմը գնահատելիս անհրաժեշտ է հաշվի առնել՝ արդյո՞ք արարքը կարող է պարունակել Օրենսգրքով սահմանված արարքի հատկանիշներ և այնպիսի էական վնաս չի պատճառել ֆիզիկական կամ իրավաբանական անձին, հասարակությանը, պետությանը, որի հիմքով սահմանված պատասխանատվությունը կդիտարկվի համաչափ:

Սույն գործով Հանձնաժողովը արձանագրում է, որ «Ղ Ֆարմ» ՍՊ ընկերությունը գործող կարգավիճակ ունեցող ընկերություն է, որպիսի պարագայում, Հանձնաժողովի գնահատմամբ, մեծ է շահերի բախման տեսանկյունից հնարավոր ազդեցության ռիսկը, հետևաբար, հայտարարատու պաշտոնատար անձի կողմից ներկայացվող հայտարարագրում ընտանիքի անդամի շահերի հայտարարագրումն Օրենքի ձևական պահանջ չէ, այլ Օրենքով պահանջվող տվյալ, որի միջոցով ապահովվում է հայտարարատու պաշտոնատար անձի հանրային վերահսկողության տեսանկյունից հանրային հաշվետվողականությունը, շահերի հնարավոր բախման իրավիճակները հսկելու և կանխարգելելու հնարավորությունը: Հայտարարագրման համակարգը նպատակ է հետապնդում հանրային գործիչների և քաղաքացիական ծառայողների վերաբերյալ տեղեկությունների բացահայտման միջոցով ձևավորել պետական ինստիտուտների նկատմամբ հանրային վստահություն և բարձրացնել նրանց գործունեության թափանցիկությունը: Այն օժանդակում է հստակեցնել ապօրինի հարստացման կամ այլ անօրինական գործողությունների ամբողջական պատկերը՝ տրամադրելով լրացուցիչ ապացույցներ, հնարավորություն է տալիս բացառել շահերի բախման իրավիճակները, բացահայտել պետական պաշտոն զբաղեցնող անձանց կողմից անհամատեղելիության պահանջների հնարավոր խախտման դեպքերը և բարձրացնել հանրային ծառայողների բարեվարքություն աստիճանը:

Հանձնաժողովն արձանագրում է, որ Օրենսգրքի 169.28-րդ հոդվածի նպատակն է ապահովել պետական պաշտոն զբաղեցնող անձի (ինչպես նաև վերջինիս ընտանիքի անդամի) հանրային հաշվետվողականությունը, հանրային գործունեության նկատմամբ վստահությունը, պետական պաշտոն զբաղեցնող անձի (ինչպես նաև վերջինիս ընտանիքի անդամի) կոռուպցիոն ռիսկերից զերծ գործունեությունը:

Անդրադառնալով Ղազար Ղազարյանի կողմից ներկայացված գրավոր պարզաբանմանը Հանձնաժողովը արձանագրում է, որ դրանում նշված փաստարկները հիմնականում վերաբերում են ոչ թե իր կողմից Հայտարարագրում համապատասխան տվյալը չներկայացնելուն, այլ վերջինիս կնոջ՝ Մելանյա Մկրտչյանի կողմից առերևույթ իրավախախտում կատարելու հանգամանքին, հետևաբար սույն գործի շրջանակում, որը վերաբերում է Ղազար Ղազարյանի կողմից իր հայտարարագրում համապատասխան հայտարարագրման ենթակա տվյալը չհայտարարագրելուն, դրանք քննարկման ենթակա չեն:

Ինչ վերաբերում է Ղազար Ղազարյանի կողմից ներկայացված այն դիրքորոշմանը, համաձայն որի, կատարված իրավախախտումը դրսևորվում է Օրենսգրքի 169.28-րդ հոդվածի 3-րդ մասի խախտմամբ, ապա Հանձնաժողովն արձանագրում է, որ այն անհիմն է, քանի որ նշված նորմը վերաբերում է այն դեպքերին, երբ հայտարարատուի կողմից չհայտարարագրված տվյալների վերաբերյալ ամբողջ և անհրաժեշտ ծավալի տեղեկությունը հայտարարատու անձի կողմից ներկայացվում է նույն հայտարարագրի մեկ այլ բաժնում, մինչդեռ սույն դեպքում Ղազար Ղազարյանի կողմից «Ղ Ֆարմ» ՍՊ ընկերությունում բաժնեմասնակցություն ունենալու վերաբերյալ տվյալ ներկայացված չէ հայտարարագրի որևէ բաժնում:

Հաշվի առնելով այն, որ Օրենսգրքի 169.28-րդ հոդվածի 5-րդ մասով սահմանված արարքի համար նախատեսված է վարչական պատասխանատվության ոչ հստակ սահմանաչափ (տուգանքի նշանակում՝ սահմանված նվազագույն

աշխատավարձի երկուհարյուրապատիկից չորսհարյուրապատիկի չափով), Հանձնաժողովն արձանագրում է, որ Օրենսգրքի 169.28-րդ հոդվածի 5-րդ մասով վարչական տույժ կիրառելիս պետք է հաշվի է առնել ինչպես խախտման բնույթը, այնպես էլ պատասխանատվությունը ծանրացնող կամ մեղմացնող հանգամանքները:

Հանձնաժողովը գտնում է, որ սույն գործով առկա չէ Օրենսգրքի 34-րդ հոդվածով նախատեսված վարչական իրավախախտման համար պատասխանատվությունը ծանրացնող որևէ հանգամանք, ինչպես նաև առկա չէ Օրենսգրքի 33-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված վարչական իրավախախտման համար պատասխանատվությունը մեղմացնող հանգամանք:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մասին» օրենքի 22-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով, 24-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով, Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքի 21-րդ հոդվածով, Հանձնաժողովը

Ո Ր Ո Շ Ե Ց

1. Ղազար Նշանի Ղազարյանի նկատմամբ կիրառել վարչական տույժ սահմանված նվազագույն աշխատավարձի երկուհարյուրապատիկի՝ 200 000 ՀՀ դրամի չափով:

2. Տուգանքը պետք է վճարվի իրավախախտողի կողմից գանձապետական 900005001335 «Իրավախախտումների համար կիրառվող վարչական տուգանքներ և պատժամիջոցներ» հաշվեհամարին՝ վճարման անդորրագրի **«նպատակ» դաշտում պարտադիր նշելով սույն որոշման համարը**:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում Ղազար Ղազարյանին այն սահմանված կարգով հանձնելու (հանձնված համարվելու) հաջորդող օրվանից:

4. Սույն որոշումն ուժի մեջ մտնելուց հետո Ղազար Ղազարյանին տրամադրել եռօրյա ժամկետ Հայտարարագրի համապատասխան բաժնում ուղղում կատարելու համար:

5. Սույն որոշումը կարող է բողոքարկվել ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով և ժամկետում:

ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀԻ

ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՏԱՐՈՂ՝ ՄԱՐԻԱՄ ԳԱԼՍՏՅԱՆ